

"26" մայիսի 1999 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

26 մայիսի 1999 թվականի թիվ 351

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ
ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

"Քաղաքաշինության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 10 եւ 16 հոդվածների համապատասխան` Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Սահմանել քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի մշակման եւ հաստատման հետեւյալ կարգը`

ա) քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համակարգում ընդգրկվող հանրապետական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը հաստատող (ընդունող բացի ազգային ստանդարտներից) պետական կառավարման մարմինը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը.

բ) (բ կետն ուժը կորցրել է 18.07.02 թիվ 1016-Ն որոշում)

գ) (գ կետն ուժը կորցրել է 18.07.02 թիվ 1016-Ն որոշում)

դ) քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը (բացի բնագավառի ազգային ստանդարտներից) գործողության մեջ դնելու, փոփոխություններ կատարելու եւ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար հրապարակում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը.

ե) (ե կետն ուժը կորցրել է 18.07.02 թիվ 1016-Ն որոշում)

զ) քաղաքաշինության բնագավառի գերատեսչական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի մշակումն ու հաստատումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության համապատասխան նախարարությունները, գերատեսչությունները, տարածքային կառավարման մարմինները` համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության հետ: